ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2022 թվականի N 1872 - Ն

ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՎՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ (ՆԵՐՄՈՒԾՎԱԾ), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎՈՂ ԱՆՎԱՎՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԱՆՎԱՎՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ՏԻՊԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԵՋԱԿԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և ԵՏՀ խորհրդի 2022 թվականի օգոստոսի 19-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 877 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 120 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների անվավոր տրանսպորտային միջոցներ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (ներմուծված), Հայաստանի Հանրապետությունում արտադրված, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվող անվավոր տրանսպորտային միջոցներին (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) ներկայացվող պահանջները և դրանց համապատասխանության գնահատման կանոնները (այսուհետ՝ կանոններ)՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տրանսպորտային միջոցի տիպի գնահատման մասին եզրակացության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի տիպի գնահատման մասին եզրակացության ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) եզակի տրանսպորտային միջոցի գնահատման մասին եզրակացության ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի համարների կառուցվածքը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Մինչև ԵՏՀ խորհրդի 2022 թվականի օգոստոսի 19-ի N 120 որոշման գործողության ժամկետի ավարտը թույլատրել սույն որոշմամբ հաստատված համապատասխանության գնահատման կանոնների իրականացումը և դրանց հիման վրա ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների անվավոր տրանսպորտային միջոցներ արտադրողների պաշտոնական ներկայացուցիչների կողմից տրանսպորտային միջոցների Հայաստանի Հանրապետություն ներմուծումը:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում ապահովել սույն որոշման համաձայն ներմուծված տրանսպորտային միջոցների ռեեստրի ձևավորումն ու վարումը:

4. Քաղաքաշինության և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետություն ներմուծված (ներմուծվող), Հայաստանի Հանրապետությունում արտադրված, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ գտնվող տրանսպորտային միջոցների նկատմամբ պետական վերահսկողություն:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ արգելելով սույն որոշման համաձայն ներմուծված տրանսպորտային միջոցների պետական գրանցումն առանց գնահատման մասին եզրակացության:

6. Տրանսպորտային միջոցները (ամրաշրջանակ), որոնք արտադրված են Ռուսաստանի Դաշնությունում՝ իր ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ համաձայն ԵՏՀ խորհրդի 2022 թվականի ապրիլի 5-ի N 45 որոշման, կարող են ներմուծվել և շրջանառվել Հայաստանի Հանրապետության տարածքում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ